



ԱՐՐՈՂԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
 Հայաստանի ազգային ագրարային համալսարան
 AGRICULTURE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական պարբերական
ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/scientific-journal

doi: [10.52276/25792822-2023.3-290](https://doi.org/10.52276/25792822-2023.3-290)

ՀՏԴ 636.32/38.CB2.2

ՆԵՐԿՐՎԱԾ ԲԼԱՆՇ ՑԵՆՏՐԱԼ ՄԱՍԻՎ ՑԵՂԻ ՈՂԽԱՐՆԵՐԻ ԲՈՒԾՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎՅ «ԲԱԼԱՅՈՎԻՏ» ՌԻՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տ.Ժ. Չիթչյան գ.գ.թ., Չ.Ս. Փամբուխյան գ.գ.թ., Ա.Վ. Ազիզյան գ.գ.թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

tchitchyan@yahoo.com, zorik-61@mail.ru, arevik.azizyan.72@mail.ru

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Մ

Բանալի բառեր՝

գառնատվություն,
մսային մթերատվություն,
սնվածություն,
ցեղ,
քաշած

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

ՀԱՎՅ «Բալայովիտ» ուսումնափորձնական տնտեսությունում ուսումնասիրվել են ներկրված բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ողխարների կենդանի զանգվածը, կերի նկատմամբ պահանջը, ուտելիության մակարդակը, եղանակային պայմաններին հարմարվելու ունակությունը, վերարտադրողական ցուցանիշները, պահվածքի պայմանները:

Կենդանիները տեղափոխումից հետո սկզբնական շրջանում կորցրել են գրանցված միջին կենդանի զանգվածի մոտ 2,6 %-ը: Սակայն կարճ ժամանակահատվածում այն վերականգնվել է: Էգերի օրական քաշածը կազմել է 365, իսկ արուներինը՝ 450 գ: Մեկ կգ քաշածի համար ծախսվել է 5,15 էԿՄ: Գառնատվության մակարդակը կազմել է 136 %, միջնային ժամանակահատվածը՝ 271-320 օր, երկու տարում ապահովվել է երեք ծին:

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականներին ողխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագրի հաստատմամբ իրականացվել են ճյուղի զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Ներկրվել են մասնագիտացված բարձրմթերատու, մասնավորապես մսային ուղղության ցեղեր, որոնք վաղահաս են, ունեն կայուն ժառանգական հատկանիշներ, լավ որակի, ոչ ցանկալի յուրահատուկ հոտից ու համից զերծ միս և լայնորեն բուծվում են արտերկրում: Ընդ որում՝ մսի բարձր որակը պայմանավորված է հիրսինաթթվի բավականին ցածր պարունակությամբ:

Հարկ է նշել, որ ողխարի միսը, բացի համային լավ հատկություններից և դյուրամարսությունից, աչքի է ընկնում նաև խոլեստերինի համեմատաբար ցածր պարունակությամբ

յամբ (B.E. Никитченко, Д.В. Никитченко, 2009, Б.Б. Траи-сов и др., 2017, Ю.А. Колосов и др., 2022):

Ողխարի մսային ուղղության ցեղերի բուծումը ներկայումս ավելի եկամտաբեր է, քան ողխարից բուրդ, կաթ կամ կաշի ստանալը: Հայաստանում վերջին տարիներին ողխարաբուծության մթերատու ուղղություններից ավելի կարևորվում է մսայինը, ինչը պայմանավորված է ոչ միայն նվազ ծախսատարությամբ և ներքին շուկայի պահանջարկով, այլև հանրապետությունից ողխարի նշանակալի գլխաքանակի արտահանմամբ: Մասնավորապես վերջինիս շահավետությամբ պայմանավորված՝ արտասահմանյան երկրներից Հայաստան սկսեցին ներկրել և բուծել ողխարի մսային ուղղության հայտնի ցեղեր՝ դորպեր, հիսարյան, բլանշ ցենտրալ մասիվ և այլն:

ՄԱՉԾ գրասենյակի «ԵՄ կանաչ գյուղատնտեսության

Նախաձեռնություն Չայաստանում» ծրագրի շրջանակում Չայաստան են ներկրվել բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարներ և բաժանվել Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի 35 ֆերմերների, իսկ 2021 թ. հոկտեմբերին 24 գլուխ (3 արու, 21 էգ) 7-8 ամսական մատղաշ նվիրաբերվել է ՉԱԱՅ-ին (ըստ գրանցված տվյալների՝ արունների միջին կենդանի զանգվածը կազմել է 40-45 կգ, էգերինը՝ 35-40 կգ):

Բլանշ ցենտրալ մասիվ ցեղը Ֆրանսիայի կենտրոնական շրջանում նախկինում բուծվող ոչխարների ցեղերի ճյուղերից է, որը միջնադարում Ֆրանսիա է բերվել Արևելյան Եվրոպայից և Մերձավոր Արևելքից:

Չարկ է կշել, որ ոչխարի բլանշ ցենտրալ մասիվ ցեղը 45-50 տարի առաջ ստացվել է Ֆրանսիայի կենտրոնական շրջանում ծովի մակերևույթից միջինը 500-1200 մ բարձրության վրա գտնվող ոչ հարուստ բուսականությամբ լեռնային գոտում, որտեղ ամառը չոր է, ձմռան տևողությունը՝ երկու ամիս, ջերմաստիճանը՝ -10-ից +15 °C: Ուստի այն լավ հարմարվում է բարձրադիր շրջանների կլիմայական պայմաններին:

Ըստ ցեղի ստանդարտի՝ բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարն ամբողջովին սպիտակ է (Նկ. 1, 2): Լիտարիք խոյերի կենդանի զանգվածը կազմում է 90-140, մաքիներիը՝ 60-85 կգ: Գառնատվությունը բավականին բարձր է՝ 100 մաքու հաշվով 158 գառ: Ծինն ընթանում է առանց բարդությունների: Ամուր և երկար ոտքերի շնորհիվ կենդանին կարողանում է երկար քայլել և կեր հայթայթել (Dodouet, 2003):

Արոտի ցածր բերքատվությամբ պայմանավորված՝ բլանշ ցենտրալ մասիվ ցեղը կարող է արագ կորցնել կենդանի զանգվածը, իսկ առատ բուսականության դեպքում՝ կորցրածն արագ վերականգնել: Ուստի հայտնի է նաև որպես «ակորդեոն» տիպի ցեղ (Dodouet, 2003, www.races-ovines-des-massifs.com):

Նյութը և մեթոդները

Խնդիր է դրվել ՉԱԱՅ «Բալահովիտ» ՈւՓՏ պայմաններում ուսումնասիրել Չայաստան ներկրված բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարների ցեղային առանձնահատկությունների պահպանումը, նոր պայմաններում դրանց դրսևորումը և

շահառուներին առաջարկել պահվածքի, կերակրման ու բուծման արդյունավետ եղանակներ:

Մինչև նվիրաբերված կենդանիների ստացումը՝ նախապես վերակառուցվել է 500 մ² զբոսաբակ ունեցող 200 մ² ոչխարանոցը: Այն համապատասխանում է գոռիդիենիկ պայմաններին ներկայացվող պահանջներին (A.A. Цербакова, Н.Л. Лопатова, 2020):

Ոչխարների ջրիմեցումը և կերակրումը կազմակերպվել են զբոսաբակում (Նկ. 3): Ուսումնասիրվել են կենդանի զանգվածը, կերի նկատմամբ պահանջը, ուսելիության մակարդակը, եղանակային պայմաններին հարմարվելու ունակությունը, վերարտադրողական ցուցանիշները, պահվածքի պայմանները (Benoit, et al., 2020):

Ուսումնասիրությունները կատարվել են անասնաբուծությունում ընդունված դիտարկման (աչքաչափային) և փորձարարական մեթոդներով (B.B. Абенеев и др., 2009):

Դիտարկման մեթոդով ուսումնասիրվել են կենդանիների արտակազմվածքը, համակազմվածքը, ինչպես նաև շենքային պայմանները:

Փորձարարական մեթոդի համաձայն՝ ոչխարների կշռումներն ու չափումները կատարվել են հատուկ չափիչ գործիքներով և «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ մասնագետների կողմից պատրաստված և ծրագրավորված էլեկտրական կշեռքով (Նկ. 4):



Նկ. 3. Բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարների կերակրումը:



Նկ. 1. Բլանշ ցենտրալ մասիվ ցեղի խոյ:



Նկ. 2. Բլանշ ցենտրալ մասիվ ցեղի շիշակ:



Նկ. 4. Էլեկտրական կշեռքով խոյի կշռում:

Կենդանիների ականջներին փակցված չիպավորված պիտակների հիման վրա ստացիոնար ընթերցող սարքի միջոցով կենդանի զանգվածի անհատական տվյալներն ավտոմատ մուտքագրվել են համակարգ:

Արդյունքները և վերլուծությունը

ՀԱԼՀ անասնաբուժության ամբիոնի մասնագետների կողմից մշակվել և կազմվել է բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարների կերաբաժին (աղ. 1):

Աղյուսակ 1. Բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարների կերաբաժինն ըստ 2021-2022 թթ. ամիսների (օրական մեկ գլխի հաշվով)*

Կերաբաժին	Ամիսներ					
	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ
Կորնզանի խոտ, կգ	1,3	1,3	2,2	3,3	3,3	3,5
Համակցված կերախառնուրդ, կգ	-	0,3	0,3	0,35	0,35	0,35
Աղ, գ	30	30	30	30	30	30
Սոդա, գ	-	-	30	30	30	30
Կերաբաժնի սննդային արժեքը, ԷԿՄ	0,6	0,9	2,1	2,9	2,9	3,0

Ուսումնասիրվել է կենդանիների կերի ուտելիության մակարդակը, և կերաբաժինը, ըստ ամիսների, ենթարկվել փոփոխության: Կերատեսակների սննդարարության ցուցանիշները դուրս են բերվել գրականությունից (Լ.Գ. Վարդևանյան, 2007, В.П. Пестис и др., 2009, А.П. Калашников и др., 2003):

Աղյուսակ 2-ի տվյալների համաձայն՝ նոր տեղափոխված ոչխարները սկզբնական շրջանում կորցրել են գրանցված միջին կենդանի զանգվածի մոտ 2,6 %-ը: Սակայն հետագայում էգերի քաշաճն ավելացել է՝ կազմելով 203-365 գ: Արուների մոտ գրեթե կենդանի զանգվածի կորուստ չի գրանցվել, քաշաճը դեկտեմբերին ավելացել է 445 գ, փետրվարին՝ 478 գ, մարտին՝ 450 գ: Ըստ ստացված տվյալների՝ մեկ կգ քաշաճի համար միջինը ծախսվել է 5,15 ԷԿՄ:

Ոչխարների առաջին զուգավորումը կատարվել է, երբ էգերի կենդանի զանգվածը կազմել է լիատարիք մաքիների կենդանի զանգվածի 80 %-ը, այսինքն՝ մոտ 45-50 կգ, իսկ արուներինը՝ 80-85 կգ (Յու.Գ. Մարմարյան և ուրիշ., 2001):

Կենդանիների սնվածությունը եղել է միջին և միջինից բարձր: Գառնատվության մակարդակը կազմել է 136 %, միջձնային ժամանակահատվածը՝ 271-320 օր, ինչը հնարավորություն է տալիս երկու տարում ապահովել երեք ծին: Ուսումնասիրությունների ընթացքում հավաքագրվել են նաև Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում բաշխված բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարների բուժման տվյալները: Վերջիններիս վերլուծությամբ պարզվել է, որ բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարները լավ են հարմարվում նշված մարզերի բնակլիմայական պայմաններին, հատկապես ուշագրավ է, որ 100 մաքու հաշվով ստացվել է 135 գառ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենդանիներն անցնում են կլիմայավարժեցման փուլ, գառնատվությունը կարելի է գնահատել բավականին բարձր: Հայաստանում բուծվող մնացած ցեղերի համեմատությամբ 100 մաքու հաշվով գառնատվությունը կազմել է 20 գլխով ավելի:

Աղյուսակ 2. Կենդանի զանգվածի փոփոխությունն ըստ 2021-2022 թթ. ամիսների*

Սեռը	Գլխաքանակը	Ամիսներ											
		հոկտեմբեր		նոյեմբեր		դեկտեմբեր		հունվար		փետրվար		մարտ	
		8 ամսական		9 ամսական		10 ամսական		12 ամսական		13 ամսական		14 ամսական	
		կգ	քաշաճ, գ	կգ	քաշաճ, գ	կգ	քաշաճ, գ	կգ	քաշաճ, գ	կգ	քաշաճ, գ	կգ	քաշաճ, գ
Էգ	20	35,3	-	34,4	-30	40,7	203	46,2	117	51,4	186	58,7	365
Արու	3	40,3	-	40	-	53,8	445	63,7	319	77,1	478	86,1	450

*Կազմվել է հեղինակների կողմից:

Եզրակացություն

Ուսումնասիրությունների համաձայն՝ բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարները լավ են հարմարվում ՀԱԱՀ «Բալահովխտ» ՈԻՓՏ պայմաններին: Ներկայումս տնտեսությունում դրանց մոտ բեղմնավորման սեզոնայնությունը «հարթվում» է, ինչը հնարավորություն է տալիս երկու տարում ստանալ երեք ծին և ամբողջ տարվա ընթացքում մշտապես ունենալ իրացման ենթակա գառներ:

Առաջարկվում է բլանշ ցենտրալ մասիվ ցեղի ոչխարների բուծումը հիմնականում կազմակերպել մաքուր բուծմամբ, ընդ որում՝ բուծել և շրջանացնել Շրակի, Լոռու և Տավուշի մարզերում, որտեղ կլիմայավարժեցումը խնդիրներ չի առաջացնում, ինչպես նաև բարձր սնվածությամբ գառներ ստանալու նպատակով փորձել այս ցեղը տրամախաչել ոչխարի տեղական ցածրթերատու ցեղերի հետ՝ հնարավորինս օգտագործելով ՀԱԱՀ մասնագետների կողմից առաջարկվող կերաբաժինները:

Գրականություն

1. Մարմարյան Յու.Գ. և ուրիշ. Անասնաբուծության հիմունքներ. - Եր.: Ասողիկ, 2001. - 436 էջ:
2. Վարդևանյան Լ.Գ. Գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմաներ և կերաբաժիններ: Ուսումնագործական տեղեկագիրք. - Եր., 2007. - 253 էջ:
3. Калашников А.П., Фисинин В.А., Щеглов В.В., Клейменов Н.И. Нормы и рационы кормления сельскохозяйственных животных. Справочное пособие. - М., 2003. - 350 с.
4. Колосов Ю.А., Чамурлиев Н.Г., Дегтярь А.С., Смородин Ф.А. Мясная продуктивность овец различных генотипов // Известия Нижегородский агр. унив. - N 2 (66). - 2022. <https://cyberleninka.ru/article/n/myasnaya-produktivnost-ovets-razlichnyh-genotipov/viewer>.
5. Методика оценки мясной продуктивности овец / В.В. Абонеев [и др.]. - Ставрополь, 2009. - 35 с. <https://cyberleninka.ru/article/n/myasnaya-produktivnost-potomstva-tonkorunnyh-matok-i-baranov-proizvoditeley-razlichnogo-proishozhdeniya>.
6. Никитченко В.Е., Никитченко Д.В. Мясная продуктивность овец. - М., 2009. - 591 с.
7. Пестис В.П. и др. Кормление сельскохозяйственных животных. - Минск, 2009. - 540 с.
8. Траисов Б.Б., Есенгалиев К.Г., Смагулов Д.Б., Юлдашбаев Ю.А., Шахтамиров И.Я. Рост и развитие мясо-шерстных овец разных генотипов // Аграрная наука. - N 3. - 2017. - С. 15-17.
9. Щербакова А.А., Лопаева Н.Л. Зоогигиенические требования содержания овец // Молодежь и наука. - N 10/37. - 2020. - С. 23-27.
10. Benoit, M., Joly, F., Blanc, F., Dumont, B., Mosnier, R.S.C. (2020). Assessment of the buffering and adaptive mechanisms underlying the economic resilience of sheep-meat farms. // Agronomy for Sustainable Development Volume 40, - p. 34. <https://doi.org/10.1007/s13593-020-00638-z>.
11. Dodouet, C. (2003). La production du mouton, 2e edition, Ed France Agricole, Paris.
12. <https://www.races-ovines-des-massifs.com/en/sheep-breeds/blanche-massif-central.php>. The Blanche Du Massif Central, a French Sheep Adapted to All Conditions. (դիտվել է՝ 06.07.2023 թ.).

Первые результаты разведения завезенных овец породы бланш Центрального массива в учебно-опытном хозяйстве “Балаовит” НАУА

Т. Ж. Читчян, З.С. Памбуччян, А.В. Азизян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: мясная продуктивность, порода, привес, упитанность, ягнение

Аннотация. В УОХ “Балаовит” НАУА были изучены живая масса, потребность в корме, уровень поедания, способность адаптироваться к погодным условиям, воспроизводительные показатели, условия содержания завезенных овец породы бланш Центрального массива.

В начальный период после перевозки животные потеряли около 2.6 % зарегистрированного среднего живого веса. Однако за короткое время он восстановился: был отмечен суточный привес 365 г у самок, 450 г у самцов. На 1 кг привеса потрачено 5.15 ЭКЕ. Плодовитость составила 136 %, интервал между родами – 271-320 дней, что обеспечило три ягнения за два года.

First Results of Breeding of Blanche Central Massive Sheep Breed in the “Balahovit” Teaching-Experimental Farm of ANAU**T.Zh. Chitchyan, Z.S. Pambukhchyan, A.V. Azizyan***Armenian National Agrarian University***Keywords:** *acclimatization, breed, fatness, meat productivity, weight gain*

Abstract. In recent years, in Armenia, meat has become more important than other food-producing directions of sheep breeding, which is due not only to lower costs and the demand for the domestic market but also to the export of many sheep from the republic. Consequently, foreign breeds of mutton, such as Dorper, Hisar, Romanov, Blanch Central Massif, etc., began to be imported and bred in Armenia due to their profitability.

On October 20, 2021, Blanche sheep from the Central Massif was imported to the Balahovit ANAU experimental farm. A sheep was mated with a female weighing 80 % of the live weight of an adult queen, about 45-50 kg, and a male weighing 80-85 kg. There was an average or above-average fat level in the animals. Live weight, the amount of feed needed, the level of feed intake, the ability to adapt to weather conditions and reproductive performance were studied. Methods used in animal husbandry were used in the studies. When the animals were moved, they lost about 2.6 % of their weight during the initial period. However, it was restored within a short time. Females gained 365 g in March 2022, and males gained 450 g, which is an excellent indicator. A kilogram of weight gain costs 5.15 EFU. The pregnancy rate was 136 %, and the inter-calving period was 271-320 days, which made it possible to provide three births in two years.

*Ընդունվել է՝ 14.07.2023 թ.
Գրախոսվել է՝ 30.08.2023 թ.*